**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓԱՓՈՒԿ ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/21**

ք. Երևան «09» ապրիլի 2020թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տ.Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Նարիբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված փափուկ կահույքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

**3.1 Պայմանագրի գինը կազմում է 10 519 000 /տասը միլիոն հինգ հարյուր տասնինը հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի` պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկ[illegible] համաձայնությամբ՝ բացառությամբ՝ հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԱԺ աշխատակազմ** | **Արգավանդ կահույք ՍՊԸ** |
| **ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19** | **ք.Երևան, Անդրանիկի 129, բն.4** |
| **ՀՎՀՀ 00008519** | **“Հայէկոնոմբանկ “ ԲԲԸ Մետաքս Մ/Ճ** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **Հ/Հ 163218020242** |
| **Հ/Հ 900011020147** | **ՀՎՀՀ 01261634** |
| **ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար** | **Տնօրեն** |
| **Տ. Գալստյան** | **Վ.Նարիբեկյան** |
| ------------------------------- | ------------------------------- |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*, 09 ե ապրիլի 2020թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 39151150/4 | Փափուկ կահույք | Մաղրաս Դամկար ՍՊԸ | Փափուկ կահույքի լրակազմ, որը ներառում է 1 բազմոց, 2 բազկաթոռ (3+1+1): Բազմոցի արտաքին չափերը՝ 202x82x100 սմ, բազկաթոռի արտաքին չափերը՝ 82x82x100 սմ: Կահույքի հիմքը և հենակները կլինեն մշակված, չոր փայտից, փայտի չափերը՝ 4x3 սմ, խոնավության աստիճանը՝ 9%, և 1 սմ հաստությամբ նրբատախտակից: Հիմքի փայտերը, նրբատախտակները միմյանց ամրացված կլինեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի ետնամասում, սպունգի հետ միասին կլինեն էլաստիկ ռետինե գոտիներ (7 սմ լայնությամբ), որոնք սպունգի և գոտիների միջև ամբողջ նստատեղի և մեջքի մակերեսով պետք է փակված կլինեն բամբակյա գործվածքով (քաթան): Մեջքի հետևի հատվածում ռետինային գոտիները՝ 4 սմ լայնությամբ: Ոտքերը՝ հաճարի փայտից: Նստատեղի համար օգտագործվող նյութերը՝ 12 սմ հաստությամբ 35 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, մեջքի համար օգտագործվող նյութերը՝ 10 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, հենակները՝ 3 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ: Նստատեղի, մեջքի սպունգի և պաստառի միջև 3 սմ հաստությամբ սինտեպոնով: | հատ | 499 000 | 499 000 | 1 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 | 1 | Սկիզբը-պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո: Ավարտը-ապրանքի մատակարարման մեկնարկից հետո 40 օրացուցային օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կահույքը բոլոր կողմերից կլինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն գործվածքից (43% պոլիեսթեր, 28% պոլիամիդ, 29% ակրիլ, առաձգական ուժ՝ >350 Ն., քայքայիչ դիմադրություն >75000 ցիկլ, խտություն՝ 320+15 գր/մԱ): Հենակներին մուգ գույնի կտորե լար (կանթ): Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Ապրանքը կմատակարարվի չօգտագործված (նոր) և փաթեթավորված: Երաշխիքային ժամկետը՝ 3 տարի: | | | | | | | |
| 2 | 39151150/5 | Փափուկ կահույք | Կվադրո Դամկար ՍՊԸ | Փափուկ կահույքի լրակազմ, որը ներառում է 1 բազմոց, 2 բազկաթոռ (2+1+1): Բազմոցի արտաքին չափսերը՝ 142x90x75 սմ, բազկաթոռի արտաքին չափսերը՝ 90x90x75 սմ: Կահույքի հիմքը, հենակները և մեջքի կլոր հատվածը կլինեն մշակված, չոր փայտից, փայտի չափսերը՝ 4x3 սմ, խոնավության աստիճանը՝ 9%, և 1 սմ հաստությամբ նրբատախտակից: Հիմքի փայտերը, նրբատախտակները միմյանց ամրացված կլինեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և հենակների դիմացը 0.4 սմ հաստությամբ նրբատախտակով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի ետնամասում, սպունգի հետ միասին կլինեն էլաստիկ ռետինե գոտիներ (7 սմ լայնությամբ), որոնք սպունգի և գոտիների միջև ամբողջ նստատեղի և մեջքի մակերեսով փակված կլինեն բամբակյա գործվածքով (քաթան): Մեջքի հետևի հատվածում ռետինային գոտիները՝ 4 սմ լայնությամբ: Ոտքերը՝ հաճարի փայտից: Նստատեղի համար օգտագործվող նյութերը՝ 14 սմ հաստությամբ 35 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, մեջքի համար օգտագործվող նյութերը՝ 5 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, հենակները՝ 5 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ: Նստատեղի, մեջքի սպունգի և պաստառի միջև 3 սմ հաստությամբ սինտեպոնով: Կահույքը բոլոր կողմերից կլինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն արհեստական կաշվից (խտություն՝ 650-700 գր/մԱ, բազմակի ծկման դիմադրություն >150000 ցիկլ): Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Ապրանքը | հատ | 390 000 | 1 950 000 | 5 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 | 5 | Սկիզբը-պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո: Ավարտը-ապրանքի մատակարարման մեկնարկից հետո 40 օրացուցային օր |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կմատակարարվի չօգտագործված (նոր) և փաթեթավորված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 3 տարի: | | | | | | | |
| 3 | 39151150/6 | Փափուկ կահույք | Գերման Դամկար ՍՊԸ | Փափուկ կահույքի լրակազմ, որը ներառում է 1 բազմոց, 2 բազկաթոռ (2+1+1): Բազմոցի արտաքին չափսերը՝ 144x90x85 սմ, բազկաթոռի արտաքին չափսերը՝ 84x90x85 սմ:<br>Կահույքի հիմքը և հենակները կլինեն մշակված, չոր փայտից, փայտի չափսերը՝ 4x3 սմ, խոնավության աստիճանը՝ 9%, և 1 սմ հաստությամբ նրբատախտակից: Հիմքի փայտերը, նրբատախտակները միմյանց ամրացված կլինեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի ետնամասում, սպունգի հետ միասին կլինեն էլաստիկ ռետինե գոտիներ (7 սմ լայնությամբ), որոնք սպունգի և գոտիների միջև ամբողջ նստատեղի և մեջքի մակերեսով փակված կլինեն բամբակյա գործվածքով (քաթան): Մեջքի հետևի հատվածում ռետինային գոտիներ՝ 4 սմ լայնությամբ. Ոտքերը՝ հաճարի փայտից: Նստատեղի համար օգտագործվող նյութերը՝ 14 սմ հաստությամբ 35 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, մեջքի համար օգտագործվող նյութերը՝ 14 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, հենակները՝ 3 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ: Նստատեղի, մեջքի սպունգի և պաստառի միջև 3 սմ հաստությամբ սինտեպոնով: Նստատեղի և մեջքի բարձերը երկու կողմից պաստառապատված են և ձգված չեն կահույքի հիմքին:<br>Կահույքը բոլոր կողմերից կլինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն գործվածքից (43% պոլիեսթեր, 28% պոլիամիդ, 29% ակրիլ, առաձգական ուժ՝ >350 Ն., քայքայիչ դիմադրություն >75000 ցիկլ, խտություն՝ 320+15 գր/մԱ), նորուկի տեսքով: Նստատեղի և մեջքի բարձերի վրա կլինի կոռրե լար (կանթ): Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Ապրանքը կմատակարարվի չօգտագործված (նոր) և փաթեթավորված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 3 տարի: | հատ | 400 000 | 1 600 000 | 4 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 | 4 | Սկիզբը- պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո: Ավարտը- ապրանքի մատակարարման մեկնարկից հետո 40 օրացուցային օր |
| 4 | 39151150/7 | Փափուկ | Բարսելոնա | Փափուկ կահույքի լրակազմ, որը ներառում է 1 բազմոց, 2 բազկաթոռ (2+1+1): Բազմոցի | հատ | 450 000 | 1 800 000 | 4 | ք. Երևան, Մ. | 4 | Սկիզբը- պայմանագիրը ուժի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կահույք | Դամկար ՍՊԸ | արտաքին չափսերը՝ 174x90x88 սմ, բազկաթոռի արտաքին չափսերը՝ 114x90x88 սմ:<br>Կահույքի հիմքը և հենակները կլինեն մշակված, չոր փայտից, փայտի չափսերը՝ 4x3 սմ, խոնավության աստիճանը՝ 9%, և 1 սմ հաստությամբ նրբատախտակից: Հիմքի փայտերը, նրբատախտակները միմյանց ամրացված կլինեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի ետնամասում, սպունգի հետ միասին կլինեն էլաստիկ ռետինե գոտիներ (7 սմ լայնությամբ), որոնք սպունգի և գոտիների միջև ամբողջ նստատեղի և մեջքի մակերեսով փակված կլինեն բամբակյա գործվածքով (քաթան): Մեջքի հետևի հատվածում ռետինային գոտիներ՝ 4 սմ լայնությամբ: Ոտքերը՝ հաճարի փայտից: Նստատեղի համար օգտագործվող նյութերը՝ 18 սմ հաստությամբ 35 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, մեջքի համար օգտագործվող նյութերը՝ 15 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, հենակները՝ 3 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, որի վրա ձգված է բարձ սինտեփոնով: Նստատեղի, մեջքի սպունգի և պաստառի միջև 3 սմ հաստությամբ սինտեպոնով:<br>Կահույքը բոլոր կողմերից կլինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն գործվածքից (43% պոլիեսթեր, 28% պոլիամիդ, 29% ակրիլ, առաձգական ուժ՝ >350 Ն., քայքայիչ դիմադրություն >75000 ցիկլ, խտություն՝ 320+15 գր/մՄ), նոբուկի տեսքով: Թևերի վրա զարդակար: Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Ապրանքը կմատակարարվի չօգտագործված (նոր) և փաթեթավորված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 3 տարի: | | | | | Բաղրամյան պողոտա 19 | | մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո: Ավարտ-ապրանքի մատակարարման մեկնարկից հետո 40 օրացուցային օր |
| 5 | 39151150/8 | | Կրիստալ<br>Դամկար ՍՊԸ | Փափուկ կահույքի լրակազմ, որը ներառում է 1 բազմոց, 2 բազկաթոռ (2+1+1): Բազմոցի արտաքին չափսերը՝ 156x90x88 սմ, բազկաթոռի արտաքին չափսերը՝ 96x90x88 սմ:<br>Կահույքի հիմքը և հենակները կլինեն չոր, մշակված փայտից (փայտի չափսերը՝ 4x3 սմ, խոնավության աստիճանը՝ 9-13%) և 1 սմ հաստությամբ նրբատախտակից: Հիմքի | հատ | 380 000 | 1 520 000 | 4 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 | 4 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Փափուկ կահույք | | փայտերը, նրբատախտակները միմյանց կձգվեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի ետնամասում, սպունգի հետ միասին կլինեն էլաստիկ ռետինե գոտիներ (7 սմ լայնությամբ), որոնք սպունգի և գոտիների միջև ամբողջ նստատեղի և մեջքի մակերեսով պետք է փակված լինեն բամբակյա գործվածքով (քաթան): Նստատեղի մեջ նաև օգտագործվում է 0.3սմ հաստությամբ մետաղյա լարեր: Հենակի վրա և մեջքի կողքը կօգտագործվի 0.4 սմ նրբատախտակ: Մեջքի հետևի հատվածում ռետինային գոտիներ՝ 4 սմ լայնությամբ: Ոտքերը՝ մետաղից: Նստատեղի համար օգտագործվող նյութերը՝ 14 սմ հաստությամբ 35 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, մեջքի համար օգտագործվող նյութերը՝ 10 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, հենակները՝ 3 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ: Նստատեղի, մեջքի սպունգի և պաստառի միջև 3 սմ հաստությամբ սինտեպոնով: Կահույքը բոլոր կողմերից կլինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն արհեստական կաշվից (խտություն՝ 650-700 գր/մԱ, բազմակի ճկման դիմադրություն >150000 ցիկլ): Հիմքի, հենակների և մեջքի վրա կլինի բաց գույնի կտորե լար (կանթ) և զարդակարեր: Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Ապրանքը կլինի չօգտագործված (նոր) և փաթեթավորված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 3 տարի: | | | | | | | Սկիզբը- պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո: Ավարտը- ապրանքի մատակարարման մեկնարկից հետո 40 օրացուցային օր |
| 6 | 39151150/9 | | Բարսելոնա Դամկար ՍՊԸ | Փափուկ կահույքի լրակազմ, որը ներառում է 1 բազմոց, 2 բազկաթոռ (2+1+1): Բազմոցի արտաքին չափսերը՝ 168x82x85 սմ, բազկաթոռի արտաքին չափսերը՝ 110x82x85 սմ: Կահույքի հիմքը և հենակները կլինեն մշակված, չոր փայտից, փայտի չափսերը՝ 4x3 սմ, խոնավության աստիճանը՝ 9%, և 1 սմ հաստությամբ նրբատախտակից: Հիմքի փայտերը, նրբատախտակները միմյանց կձգվեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի հետևի մասում, սպունգի հետ միասին կօգտագործվեն էլաստիկ ռետինային գոտիներ (7 սմ լայնությամբ), որոնց վրա՝ | հատ | 450 000 | 1 800 000 | 4 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 | 4 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Փափուկ կահույք | | սպունգի և գոտիների միջև ամբողջ նստատեղի և մեջքի մակերեսով փակված բամբակյա գործվածքով (քաթան): Հենակի վրա կօգտագործվի 0.4 սմ նրբատախտակ: Մեջքի հետևի հատվածում ռետինային գոտիներով՝ 4 սմ լայնությամբ: Ոտքերը՝ հաճարի փայտից: Նստատեղի համար օգտագործվող նյութերը՝ 14 սմ հաստությամբ 35 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, մեջքի համար օգտագործվող նյութերը՝ 10 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, հենակները՝ 3 սմ հաստությամբ 25 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ: Նստատեղի, մեջքի սպունգի և պաստառի միջև 3 սմ հաստությամբ սինտեպոնով: Յուրաքանչյուր նստատեղի համար մեջքի հատվածում՝ բարձ սինտեպոնով: Կահույքը բոլոր կողմերից կլինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն գործվածքից (43% պոլիեսթեր, 28% պոլիամիդ, 29% ակրիլ, առաձգական ուժ՝ >350 Ն., քայքայիչ դիմադրություն >75000 ցիկլ, խտություն՝ 320+15 գր/մՄ), նորուկի տեսքով: Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Ապրանքը կլինի չօգտագործված (նոր) և փաթեթավորված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 3 տարի: | | | | | | | Սկիզբը-պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո: Ավարտը-ապրանքի մատակարարման մեկնարկից հետո 40 օրացուցային օր |
| 7 | 39151150/10 | Փափուկ կահույք | Վիզիտ Դամկար ՍՊԸ | Փափուկ կահույքի լրակազմ, որը ներառում է 1 բազմոց, 2 բազկաթոռ (2+1+1): Բազմոցի արտաքին չափսերը՝ 182x90x74 սմ, բազկաթոռի արտաքին չափսերը՝ 120x90x74 սմ: Կահույքի հիմքը, հենակները և մեջքի կլոր հատվածը կլինեն մշակված, չոր փայտից, փայտի չափսերը՝ 4x3 սմ, խոնավության աստիճանը՝ 9%, և 1 սմ հաստությամբ նրբատախտակից: Նստատեղի և հենակների դիմային հատվածում՝ 1 սմ նրբատախտակ: Հենակների, մեջքի վրա՝ 0.2 սմ բարձրորակ ճկուն ստվարաթուղթ: Հիմքի փայտերը, նրբատաղտակները միմյանց կձգվեն սոսնձով և պտուտակներով: Նստատեղի և մեջքի հատվածում, այդ թվում նաև մեջքի հետևի մասում, սպունգի հետ միասին կօգտագործվեն էլաստիկ ռետինային գոտիներ (7 սմ լայնությամբ), որոնց վրա՝ սպունգի և գոտիների միջև ամբողջ նստատեղի և մեջքի մակերեսով փակված բամբակյա գործվածքով (քաթան): Մեջքի | հատ | 450 000 | 1 350 000 | 3 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 | 3 | Սկիզբը-պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո: Ավարտը-ապրանքի մատակարարման մեկնարկից հետո 40 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հետևի հատվածում ռետինային գոտիներով՝ 4 սմ լայնությամբ: Ոտքերը՝ հաճարի փայտից: Նստատեղի համար օգտագործվող նյութերը՝ 14 սմ հաստությամբ 35 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, մեջքի համար օգտագործվող նյութերը՝ 6 սմ հաստությամբ 30 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ, հենակները՝ 6 սմ հաստությամբ 30 կգ/խ.մ խտությամբ բարձրորակ սպունգ: Նստատեղի, մեջքի սպունգի և պաստառի միջև 5 սմ հաստությամբ սինտեպոնով: Կահույքը բոլոր կողմերից կլինի պաստառապատված, պաստառը՝ բարձրորակ, դիմացկուն արհեստական կաշվից (խտություն՝ 650-700 գր/մ՛, բազմակի ճկման դիմադրություն >150000 ցիկլ): Նստատեղի վրա արհեստական կաշվից լար (կանթ): Գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Ապրանքը կմատակարարվի չօգտագործված (նոր) և փաթեթավորված: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 3 տարի: | | | | | | | օրացուցային օր |

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020147**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար–գլխավոր քարտուղար**
**Տ. Գալստյան**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**Արգավանդ կահույք ՍՊԸ**
**ք.Երևան, Անդրանիկի 129, բն.4**
**"Հայէկոնոմբանկ " ԲԲԸ Մետաքս Մ/Ճ**
**Հ/Հ 163218020242**
**ՀՎՀՀ 01261634**
**Տնօրեն**
**Վ.Նարիբեկյան**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 09 » ապրիլի 2020թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով պայմանագրի*

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը /5122/ | դիմացվճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 39151150/4 | Փափուկ կահույք | ... | ... | ... | 249 500 | 249 500 | 249 500 | 499 000 | 499 000 | 499 000 | 499 000 | 499 000 | 499 000 | **499 000** |
| 2 | 39151150/5 | Փափուկ կահույք | ... | ... | ... | 975 000 | 975 000 | 975 000 | 1 950 000 | 1 950 000 | 1 950 000 | 1 950 000 | 1 950 000 | 1 950 000 | **1 950 000** |
| 3 | 39151150/6 | Փափուկ կահույք | ... | ... | ... | 800 000 | 800 000 | 800 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | **1 600 000** |
| 4 | 39151150/7 | Փափուկ կահույք | ... | ... | ... | 900 000 | 900 000 | 900 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | **1 800 000** |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 39151150/8 | Փափուկ կահույք | ... | ... | ... | 760 000 | 760 000 | 760 000 | 1 520 000 | 1 520 000 | 1 520 000 | 1 520 000 | 1 520 000 | 1 520 000 | **1 520 000** |
| 6 | 39151150/9 | Փափուկ կահույք | ... | ... | ... | 900 000 | 900 000 | 900 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | **1 800 000** |
| 7 | 39151150/10 | Փափուկ կահույք | ... | ... | ... | 675 000 | 675 000 | 675 000 | 1 350 000 | 1 350 000 | 1 350 000 | 1 350 000 | 1 350 000 | 1 350 000 | **1 350 000** |
| Ընդամենը | | | ... | ... | ... | **5 259 500** | **5 259 500** | **5 259 500** | **10 519 000** | **10 519 000** | **10 519 000** | **10 519 000** | **10 519 000** | **10 519 000** | **10 519 000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020147**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար-գլխավոր քարտուղար**
**Տ. Գալստյան**

\------------------------------
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**
**Արգավանդ կահույք ՍՊԸ**
**ք.Երևան, Անդրանիկի 129, բն.4**
**"Հայէկոնոմբանկ " ԲԲԸ Մետաքս Մ/Ճ**
**Հ/Հ 163218020242**
**ՀՎՀՀ 01261634**
**Տնօրեն**
**Վ.Նարիբեկյան**

\------------------------------
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

*Հավելված N 3*
*« 09 » ապրիլի 2020թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ____________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 09 » ապրիլի 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ___

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն

ազգանուն, անուն

ստորագրություն